ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/17.4/19075-2026 «04» 06 2026թ.

«ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԱՐԿԱԴԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
(*ՀՀ Կոտայքի մարզ Ձորաղբյուր 2224, Ջրվեժ Այգեփարածք 4/115*)

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Վարչապետի աշխատակազմի կարիքների համար օդափոխիչի ձեռքբերման նպատակով վարչապետի աշխատակազմի և «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ի միջև 2026թ. հունվարի 20-ին կնքվել է N ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/23-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանված 2026թ. մայիսի 3-ը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Վարչապետի աշխատակազմը 08.05.2026թ. թիվ 02/19.2/15685-2026 գրությամբ դիմել է «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ին՝ արձանագրելով, որ առ 08.05.2026թ. Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքը չի մատակարարվել, ինչպես նաև սահմանելով ողջամիտ լրացուցիչ ժամկետ ապրանքի մատակարարման համար՝ մինչև

սույն թվականի մայիսի 18-ը ներառյալ: Գրությամբ նաև տեղեկացվել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետը, սույն թվականի մայիսի 18-ը ներառյալ ապրանքը չմատակարարելու դեպքում Պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել և կիրառվել համապատասխան տույժերը և տուգանքները:

Սակայն, Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարում մինչ օրս չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/23 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝

- Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ

հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

- Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝ գործերի կառավարչություն
Հեռ. 010 515 663